ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «19» 02 2020թ N° 248-Ա

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերությունը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
   1) «Զբոսաշրջության զարգացման 2020 թվականի ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) «Զբոսաշրջության զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը» ՝ համաձայն N 2 հավելվածի.
   3) Զբոսաշրջության զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը» ՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ Մարի Գրիգորյանին՝ հրամանը հաստատվելուց հետո ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
4. Նախարարության զբոսաշրջության կոմիտեի գլխավոր քարտուղարին՝

Սույն հրամանը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով ապահովել 2020 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ստեղծումը:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի «փետրվարի» «19»
N248-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) տվյալներով՝

1) 2019 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը 2018 թվականի համեմատ աճել է 4 տոկոսով՝ հասնելով 1,5 մլրդի:
2) վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս.
3) Բոլոր տարածաշրջաններում գրանցվել է ժամանումների աճ: Առաջատարը դարձել է Մերձավոր Արևելքը (+8%), նրան հաջորդում է Ասիան և Խաղաղ օվկիանոսը (+5%): Եվրոպայի և Աֆրիկայի միջազգային ժամանումները (+4%) աճել են համաշխարհային միջին ցուցանիշին համապատասխան, իսկ Ամերիկայի տարածաշրջանում միջազգային ժամանումներում 2% աճ է գրանցվել:

Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2019 թվականի հունվար-դեկտեմբերին զբոսաշրջային այցելությունները կազմել է **1.894.377**, աճը 2018 թվականի հունվար-դեկտեմբերի **1.651.782** համեմատ կազմել է **14.7 %:**



Համաձայն ՍԷԿՏ-ի տվյալների՝ 2019 թվականին աճ ապահոված երկրների այցելությունների քանակը 2018 թվականի համեմատ ունի հետևյալ պատկերը

Երկիրը	**2019 թվական**	**2018 թվական**	Աճը 2018 թվականի համեմատ
Ռուսաստան	855612	684013	25.09
Վրաստան	344607	314341	9.63
Իրան	160676	160645	0.02
ԱՄՆ	63175	53744	17.55
Ղազախստան	39882	12981	207.2
Գերմանիա	39690	28655	38.51
Հնդկաստան	38735	31213	24.10
Ուկրաինա	36125	32412	11.46
Ֆրանսիա	32397	27651	17.16
Ֆիլիպիններ	20262	20363	-0.5
Լեհաստան	**17134**	**15397**	**11.28**
Չինաստան	15550	9189	69.2
Նիդերլանդներ	14430	11898	21.28
Իտալիա	12581	10802	16.47
Մեծ Բրիտանիա	12515	10873	15.10
Լիբանան	12244	11491	6.55
Տաջիկստան	11747	10649	10.31
Արաբական Միացյալ Էմիրություններ	11028	11901	-7.34
Բելգիա	10181	8223	23.81
Բելառուս	10104	8656	16.73
Ուզբեկստան	9630	5228	84.20
Հարավային Կորեա	8970	6947	29.12
Իսպանիա	8259	6922	19.32
Կանադա	7314	6468	13.1
Իսրայել	7072	6319	11.92
Շվեդիա	6740	4782	40.9

Ավստրիա	5865	5202	12.75
Ավստրալիա	5717	4263	34.11
Իրաք	5602	5106	9.71
Շվեյցարիա	5561	4782	16.29
Դանիա	5175	2541	103.7
Հունաստան	5128	4519	13.48
Ճապոնիա	4503	3947	14.09
Չեխիա	4334	3828	13.22
Սիրիա	3198	3298	-3.03
Ղրղստան	3150	1817	73.36
Դանիա	2694	2541	6.02
Նորվեգիա	2547	2222	14.63
Բուլղարիա	2481	2471	0.40
Թաիլանդ	2455	826	197.22
Լատվիա	2390	1871	27.74
Հորդանան	2109	1972	6.95
Բրազիլիա	1899	1457	30.34
Սինգապուր	1252	826	51.57
Եգիպտոս	784	622	26.0
Քուվեյթ	728	608	19.74
Նոր Զելանդիա	582	497	17.10

Տվյալները փաստում են, որ 2019 թվականին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ ապահոված 5 երկրներն են ՌԴ-ն, Վրաստանը, Իրանը, ԱՄՆ-ն և Ղազախստանը: Սակայն այցելությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են Ֆիլիպիններից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Սիրիայից: Տոկոսային առումով կտրուկ աճ են ապահովել Դանիայից, Թաիլանդից, Չինաստանից, Սինգապուրից, Ղազախստանից, Ղրղստանից, այցելությունները:

2. Հիմք ընդունելով 2013 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները՝ փորձագիտական գնահատականներով 2019 թվականին ներգնա զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ 1500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներգնա զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):
3. 2019 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 405 398 նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել

է 45.7 %-ով: Ներքին զբոսաշրջության աճին էապես նպաստել է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը, թեկուզև այն կազմում է ներքին զբոսաշրջային այցելությունների ընդամենը 10-15%-ը:

4. 2019 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը փորձագիտական գնահատականներով կազմել է շուրջ 353 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներքին զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):
5. Ներկայումս ՀՀ տարածքում գործում են ավելի քան 558 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար), որոնց հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար շուրջ 15000 և 30350: Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից 197 գտնվում են Երևանում, 361 ՀՀ մարզերում: Բացի նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից Հայաստանում (հիմնականում գյուղական համայնքներում) գործում են շուրջ 250 զբոսաշրջային տներ (B&B):
6. 2017-2019 թվականներին Հայաստանում բացվել են ավելի քան 9 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (այդ թվում նաև միջազգային հեղինակավոր հյուրանոցային խմբերին դասվող)՝ ապահովելով շուրջ 587 հյուրանոցային համար:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Զբոսաշրջության զարգացումը նպաստում է ազգային եկամտի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

8. Ծրագիրն ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը.

- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը,
- Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը
- Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի կատարելագործմանը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ծրագրի նպատակն է նպաստել

1) Հայաստան այցելուների թվի ավելացմանը և ներքին զբոսաշրջության խթանմանը
2) Հայաստանում զբոսաշրջիկների գտնվելու ժամանակահատվածի երկարաձգմանը և ծախսի հնարավորությունների ընդլայնմանը
3) ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը
4) համաշխարհային զբոսաշրջային քարտեզում Հայաստանի դիրքի բարելավմանը
5) զբոսաշրջության ոլորտի կրթության և մասնագիտական որակավորման համակարգի ամրապնդմանը
6) միջազգային համագործակցության ամրապնդմանը և շարունակական ակտիվացմանը :

10. Ծրագրի խնդիրներն են՝

1) համաշխարհային շուկայում Հայաստանի նկարագրի՝ որպես կայուն, ապահով և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի ամրապնդում, զարգացում և խթանում,

2) նոր, մրցունակ արդյունքի ձևավորում, Հայաստանի ամբողջ տարածքում ավանդույթների և ծիսակատարությունների վերականգնմանը, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը և վերականգնմանը աջակցում, և Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների զարգացում
3) զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործմանն ուղղված ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում,
4) միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովում, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում:
5) վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդի կատարելագործում և տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմի ստեղծում:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

11. Ակնկալվող արդյունքներն են՝
1) Համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի ամրապնդված նկարագիր՝ Համաշխարհային շուկայում Հայաստանի բարելավված վարկանիշ
2) Նոր, դիվերսիֆիկացված և մրցունակ զբոսաշրջային առաջարկներ
3) Վիճակագրական տվյալների ամբողջական և առավել ճշգրիտ համակարգ
4) Բարելավված ենթակառուցվածքներ և ծառայությունների որակ
5) Զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացած միջազգային համագործակցություն:

V. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

12. Զբոսաշրջության զարգացման 2020 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեն է՝ 200.0 միլիոն դրամի չափով, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներ (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի «փետրվարի» «19»
N248-Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համակատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
	1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ					
1.1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի կատարելագործում**	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավում	Առկա ներդրված համակարգչային ծրագիր Զբոսաշրջային այցելությունների քանակի, զբոսաշրջիկների սեռի, տարիքի, քաղաքացիության վերաբերյալ վիճակագրական տվյալների համակարգ՝ ստացված տվյալներ	Զբոսաշրջության կոմիտե ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (համաձայնությամբ)	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ						
2.1.	**Թվային և սոցիալական**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման համար	Armenia, travel, discover Armenia, Visit Armenia, Yerevan և այլ բանալի բառերի միջոցով	Զբոսաշրջության կոմիտե	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

	հարթակների վարում	www.armenia.travel կայքի տեխնիկական սպասարկում, ինչպես նաև Զբոսաշրջության կոմիտեի սոցիալական հարթակներում պաշտոնական էջերի վարման, գովազդների ակտիվացման աջակցություն	Armenia.travel կայքի օպտիմալացում որոնողական համակարգերում: Սոցիալական հարթակների հետևորդների թվային ցուցանիշերի աճ՝ Ֆեյսբուք առնվազն 150 000 Ինստագրամ առնվազն 100 000 Թվիրթեր առնվազն 1500			օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.2.	**Թվային բովանդակության ստեղծում**	Թվային հարթակներում Հայաստանի զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման նպատակով թվային բովանդակության ստեղծում, այդ թվում վիզուալ նյութերի բազա՝ Հայաստանի իրազեկվածությունն ապահովող թվային հարթակներում լայնորեն օգտագործելու համար, որը կնպաստի Հայաստանի մասին թվային բովանդակության որակի բարձրացմանը և թվային հարթակներում ներկայացվածության ընդլայնմանը թեմատիկ ֆոտոշարքերի, հոլովակների միջոցով, որոնք ապահովելու են երկրի բոլոր հատվածների և նշված թեմաների լավագույն ներկայացվածությունը	Զբոսաշրջության կոմիտեի հետ համաձայնեցված՝ 250 լուսանկարների ֆոտոշարք, որը կներկայացնի Հայաստանի մշակութային, բնության, ժամանցային, արկածային, գործարար, առողջարանային, բժշկական զբոսաշրջության 14 թեմա Մինչև մեկ րոպե տևողությամբ 3 թեմատիկ վիդեոհոլովակներ Հայաստանի գաստրո, արկածային և քաղաքային զբոսաշրջության մասին	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2. 3 .	**Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով, Հայաստանը ներկայացնող գովազդատեղեկատվական փաթեթներ տարբեր լեզուներով և բովանդակությամբ	Ըստ զբոսաշրջության կոմիտեի պատվերի հետևյալ գովազդատեղեկատվական նյութերի մշակում՝ դիզայն, կոնցեպտ և թարգմանություն. - բրոշյուրներ - թռուցիկներ, - քարտեզներ, - գրիչներ, - թղթապանակներ, - կտորե պայուսակներ, - թղթե պարագաներ, - «DiscoverArmenia» - խաղ մարտահրավերի դիզայն Այլ տեղեկատվական նյութեր՝ - այցեքարտեր, - բաներներ, - օրացույցեր, - հուշանվերների փաթեթներ	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն		
2.4	**Գովազդատեղեկատվական փաթեթի տպագրություն**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով, Հայաստանի գովազդատեղեկատվական տպագիր փաթեթներ	Գովազդատեղեկատվական նյութերի տպագրում և բազմացում հետևյալ տեսակի և քանակի՝ - փաթեթ առնվազն 600 հատ - բրոշյուր առնվազն 600 հատ - թռուցիկ առնվազն 12000 հատ - քարտեզ առնվազն 4000	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			հատ - գրիչներ առնվազն 1600 հատ - թղթապանակ առնվազն 1600 - պայուսակ կտորե, թղթե առնվազն 1600 հատ - ճամպրուկի պիտակ առնվազն 1600 հատ - նոթատետր առնվազն 1600 հատ - «DiscoverArmenia» -խաղ մարտահրավեր առնվազն 1600 հատ Այլ տեղեկատվական նյութեր ըստ կոմիտեի պատվերի՝ այցեքարտեր, բաներ, օրացույց, թղթե բաժակներ, հուշանվերների փաթեթ			
2.5.	**Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	Միջազգային հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդային հոդվածներ՝ սոցիալական հարթակներում տարածելու և հարթակների ներգրավվածությունը բարձրացնելու համար	Առնվազն 4 հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածներ	Զբոսաշրջության կոմիտե	2020 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2.6	**Տեղական և միջազգային ճանաչողական այցերի կազմակերպում**	Տեղական և թիրախային շուկաներում, Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով օտարերկրյա և տեղական զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, նկարահանող խմբերի, բլոգերների, ճանաչված և ազդեցիկ մարդկանց Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում	Առնվազն 5 երկրների հայտնի և մասնագիտացված օտարերկրյա լրագրողների այցեր: Յուրաքանչյուր այցի արդյունքում հոդվածների, հաղորդաշարերի, նկարահանված կամ տպագրված նյութերի ստեղծում և տարածում: 3 տեղական ճանաչողական այցերի կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.7	**Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին, մարքեթինգային արշավների իրականացում**	Հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում՝ արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ մարքեթինգային արշավների կազմակերպում	Մասնակցություն և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում առնվազն 4 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների՝ յուրաքանչյուր ցուցահանդեսին ապահովելով առնվազն 7 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն առնվազն 3 մարքեթինգային արշավների կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ						
3.1.	**Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոների կազմակերպմանը՝ թվային հարթակներում պատշաճ ներկայանալիություն**	Համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնման ու զարգացմանը, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստում: Թվային հարթակներում փառատոների վերաբերյալ տեղեկատվության ստեղծում և տարածում	Պետական աջակցությամբ առնվազն 5 փառատոների թվային հարթակներում պատշաճ ներկայանալիության ապահովում, այդ թվում կայքի ստեղծում կամ կատարելագործում, կայքի բովանդակության մշակում, սոցիալական ցանցերում էջերի վարում (Facebook, Instagram, vkontakte), առնվազն 50 ֆոտո և առնվազն 2 վիդեո բովանդակության ստեղծում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						
4.1.	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը**	ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, մեկ միջոցառման կազմակերպում	ՀՀ մարզերում առնվազն 3 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն, մեկ միջոցառման կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020թ. ընթացքում.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

4.2.	**Պետական աջակցություն զբոսավարների դասընթացների ծրագրի կազմմանն ու կազմակերպմանը, վերապատրաստմանը**	Զբոսավարների դասընթացների ծրագրի կազմում ու կազմակերպում, վերապատրաստման գործընթացի ապահովում	Զբոսավարների դասընթացների ծրագիր և վերապատրաստման գործընթաց՝ առնվազն երկու միջոցառման կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.3	**Հյուրանոցային տնտե-սության օբյեկտների (ՀՏՕ) որակավորման և պարբերական գնահատման գործընթաց**	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթաց Հյուրանոցային տնտեսության օբյեկտների պարբերական գնահատման գործընթաց	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում՝ ըստ ներկայացված հայտերի (ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N946-Ն որոշմանը համապատասխան) Առնվազն 1 ՀՏՕ-ի որակավորում և պարբերական գնահատում	Զբոսաշրջության կոմիտե	2020 թ ընթացքում	
5.	**Միջազգային համագործակցություն**	Զբոսաշրջության իրավապայմանագրային պարտավորությունների իրականացում, համագործակցություն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային	Միջազգային համագործակ-ցության շրջանակներում միջոցա-ռումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում, երկկողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում, պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների առնվազն 2 միջոցառմանը մասնակցության ապահովում ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան	Զբոսաշրջության կոմիտե ՀՀ արտաքին գործերի նախարարություն Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2020թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

		կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացում, այդ թվում նաև Հայաստանում միջազգային նշանակալի միջոցառումների կազմակերպում Գործընկեր և նպատակային շուկա հանդիսացող երկրների հետ երկկողմ համագործակցության ամրապնդում և առավել ակտիվացում	Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակեր-պությունների ու գործընկերների կողմից կազմակերպվող ծրագրերին, համաժողովներին, աշխատանքային հանդիպում-ներին, վերապատրաստումներին: Հայաստանում առնվազն մեկ միջոցառման կազմակերպում կամ աջակցություն			

ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի «փետրվարի» «19»
N248-Ա հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ		
Զբոսաշրջության զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման		
h/h	**ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**	**2020թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները (հազար դրամ)**
1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի կատարելագործում**	7000.0
2	**Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային և խթանման գործընթաց**	136000.0
2.1.	Թվային և սոցիալական հարթակների վարում	10000.0
2.2.	Թվային բովանդակության ստեղծում	5000.0
2.3	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն	3000.0
2.4	Գովազդատեղեկատվական փաթեթի տպագրություն	15000.0
2.5	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին տեղեկատվական հոդվածների պատվիրում	23000.0
2.6	Տեղական և միջազգային ճանաչողական այցերի կազմակերպում	30000.0
2.7	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին	50000.0
3	**Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում**	8500.0
3.1	Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոների կազմակերպմանը՝ թվային հարթակներում պատշաճ ներկայանալիություն	8500.0
4	**Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում**	10500.0
4.1	Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը	7500.0
4.2	Պետական աջակցություն զբոսավարների դասընթացի ծրագրի կազմանն ու կազմակերպմանը	3000.0
4.3	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) որակավորման և պարբերական գնահատման գործընթացի կազմակերպում	0.0
5	**Միջազգային համագործակցություն**	4800.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	166800.0
	ԱԱՀ	33200.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	200000.0